

Արտաշես ԲՈՅԱԶՅԱՆ

ՍԵՂՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեղվապահությունը պատմական Շիրակի տնտեսության հիմն ճյուղերից է: Այն բավականին տարածված գրադարձն է ոչ միայն գյուղական, այլև քաղաքային բնակչության համար:

Մեղվարության զարգացումը Շիրակում պայմանավորված է երկու հանգամանքներով. նախ դրա համար շրջանն ունի նպաստավոր բնակլիմայական պայմաներ՝ ուղղահայաց բարձրությունների (հարրավայրային, նախալեռնային և լեռնային գոտիների) առկայությունը, ծաղկող կերակրաբույսերի և տեխնիկական բույսերի լայնատարած մշակումը, պայիշական մարզագետինների և վայրի մեղրատու բույսերի առատությունը:¹ Մյուս ոչ պակաս կարևոր հանգամանքը Շիրակի բնակչության, և հատկապես Գյումրի-Ալեքսանդրապոլի ավանդական ունտեսությունների համակարգում մեղրի լայն կիրառումն է: Գյումրեցու սեղանի քաղցր կերակրությունը բազմության մեջ քիչն նաև մեղրով ճաշերը:² Որպես օժանդակ գրադարձն, մեղվապահությունը չի կորցրել իր տնտեսական նշանակությունը նաև մեր օրերում:

Վերջին տասնամյակներին հանրապետությունում տեղի ունեցած սոցիալ-տրնտեսական տեղաշարժերի արդյունքում Շիրակում նկատվում է օժանդակ տնտեսական գրադարձների և անհատական տնային տնտեսությունների, այդ թվում նաև անասնապահական ճյուղ հանրապետության դերի և տեսակարար կշռի նկատելի աճ:³ Հետևաբար Շիրակի մարզի ժամանակակից մեղվապահության վիճակի ուսումնասիրությունը ունի արդիական նշանակություն, որովհետև հնարավորություն կընձեռի պարզելու աշխատունակ տարիքի բնակչության ընդգրկվածությունն այս բնագավառում, ինչպես նաև ճշտելու մարզի բնակչության հիմնական տնտեսական գրադարձների համակարգում մեղվապահության, իբրև եկանտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուրի գրանեցրած տեղն ու նշանակությունը:

Մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերի⁴ և պաշտոնական վիճակագրության տվյալների համեմատական վերլուծության հիման վրա փորձենք ներկայացնել մեղվապահության տարածքային կազմակերպությունը Շիրակի մարզում:

Համաձայն ճեղքի տակ եղած պաշտոնական վիճակագրական տվյալների՝ Շիրակի մարզում 2002 թվականին մեղվարնտանիքների թիվը կազմել է 7857: Ըստ մարզային վիճակագրության զործակալության տվյալների՝ 1997-2002 թթ. դիտվել է մեղվափերակների թվի աճ, որը կարելի է բացատրել ոչ թե մեղվարության իրական աճով, այլ նրանով, որ վերջին հինգ տարիների ընթացքում ավելացել է մեղվափերակների փաստացի գրանցումների թիվը (տես աղ. 1): Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ հատկապես Գյումրիում պահպան մեղվարնտանիքների թիվն անշուշտ ավելի մեծ է, քան ներկայացվում է, որովհետև մեղվապահությանը գրադարձն շատ ընտանիքներ պաշտոնապես չեն գրանցվում պատկան մարմիններում՝ խոսափելով որևէ գործ ուննալ պետական կառույցների հետ:

¹ Գ. Աղաջան, Կ. Բագեյան, Տնտեսական գրադարձները Շիրակի բնակչության արդի կենցարում, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գյուղական աշխատաթյուններ», Գյումրի, 2002, էջ 74:

² Հ. Աղաբեկյան, Ալեքսանդրապոլի կերակրատնտեսակներից, Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական երրորդ գիտաժողովի գեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 42:

³ Հ. Աղաբեկյան, Ալեքսանդրապոլի կերակրատնտեսակներից, Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական երրորդ գիտաժողովի գեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 42:

⁴ Գ. Աղաջան, Կ. Բագեյան, Աշխարհագրական տեղեկատու բառարան, Եր., 1982 թ., էջ 245:

⁵ Ա. Բոյազյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տեսոր 1-2, 2003թ.: 2003թ.

Աղ. 1. Մեղվարնտանիքների թվի շարժը Շիրակի մարզում 1997-2002 թվականներին⁶

Տարի	1997թ.	1998թ.	1999թ.	2002թ.
Մեղվարնտանիքների թիվը	3277	3452	4853	7857

Աղյուսակից երևում է, որ հինգ տարիների ընթացքում մեղվարնտանիքների թիվն ավելացել է 4580-ով: Որ դա իրականությանը չի համապատասխանում, որոշ չափով պարզ դարձավ մեղվապահության վերաբերյալ Արքիլի տարածաշրջանի մի շարք գյուղական բնակավայրերում մեր կատարած հարցումների արդյունքում:⁷

Պաշտոնական վիճակագրության տվյալների հիման վրա՝ 1998 թվականին մոտավոր հաշվարկներով Շիրակում արտադրված մեղրի քանակը կազմել է մարզի գյուղատնտեսության համախառն արդյունքի 0,3%-ը, իսկ 2002 թվականին՝ 1,2 %-ը: 2002 թվականին մեղվարնտանիքների թվով Շիրակի մարզում առաջինը Արքիլի տարածաշրջանն է՝ 2690 մեղվարնտանիք, իսկ վերջին տեղում՝ Գյումրի քաղաքը՝ 295:

Աղ. 2. 2002 թվականի Շիրակի մարզի մեղվարնտանիքների բաշխումը և արտադրված մեղրի միջին քանակը⁸

Ենթատարածաշրջաններ	Մեղվարնտանիքներ	Տեսակարար կշիռ	Արտադրված մեղրի մուտքը քանակը /թ/
ք. Գյումրի	295	3,7	5,6
Ախուրյան	2346	29,8	44,6
Ամասիա	623	7,9	11,8
Աճի	1435	18,3	27,3
Աշոցք	468	5,9	8,9
Արքիլ	2690	34,4	51,1
Ընդամենը	7857	100	149,3

Արքիլի տարածաշրջանի՝ խնճորենու այգիներով հարուստ Փամիկ գյուղում մեղվապահությամբ գրաղվում են ուր գյուղացիական տնտեսություններ, որոնք ունեն 60 մեղվափերակներ: Գյուղապետարանից տեղեկացամբ, որ մեղվապահներից միայն մեկն է այդ գրաղմունքը համարում եկամտի հիմնական աղբյուր: Փանիկում մեղվափերակները մնում են մինչև մայիս ամիսը, ապա հունիսից տեղափոխում են Արագած լեռան ավելի բարձրադիր գոտիներ և հոկտեմբերի սկզբներին նորից վերաբառնում են Փամիկ: Վերջին տասը տարիների ընթացքում, հիմնականում շատ բնակչների՝ արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով գյուղում դիտվել է մեղվապահների թվի նվազում: Այնպես որ այդ նվազումը երբեք էլ պայմանավորված չէ մեղվապահության ոչ արդյունավետությամբ: Ի տարրերություն Փամիկի, հարակից Արևշատ և Սպամարյան գյուղերում, ըստ բնակչների տվյալների, մեղվապահությամբ գրաղվում է ընդամենը մեկ ընտանիք: Նոյնին է պատկերը նաև Սեծ և Փոքր Մանթաշ գյուղերում, որտեղ մեղվապահությամբ գրաղվում են երկու ընտանիք և ունեն ընդամենը 3 մեղվափերակ: Սարալանջ գյուղում մեղվապահությամբ գրաղվող ընտանիքների թիվը վեցն է, որոնցից մեկը՝ մինչև 60 մեղվափերակ: Գեղանիստ գյուղում մեղվապահությամբ գրաղվում են յոթ գյուղացիական տնտեսություններ՝ հիմնականում ազգակից ընտանիքներ: Կատարած հարցումներից պարզվեց, որ վերը նշված գյուղական բնակչավայրերում մեղվապահությամբ գրաղվում են աշխատունակ բնակչության 5-8 %-ը: Այդ թվի մեջ գերակշռում են 40-50 տարեկան տղամարդիկ, որոնց օգնում են ընտանիքի կրտսեր անդամները, երեխներ՝ նոյնական 70-80 տարեկան ծերերը (ինչպես Սարալանջ և Ախուրյանի տարածաշրջանի՝ Առափի գյուղերում): Ա. Գասպարյանի հաշվումներով՝ 100-ից բարձր տարիք ունեցողները աշխատունակ ծերերի 90%-ը հովհանքներ կամ մեղվապահներ են:⁹ Արքիլի տարածաշրջանում հարցման ենթարկված մեղվապահների հիմնա-

⁶ «ՀԱՎԾ Շիրակի մարզային գործակալության տվյալներ, Գյումրի, 2002:»

⁷ Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, ԴԱՆ, տեսոր 2. Հարցումները անցկացվել են Արքիլի տարածաշրջանի Փամիկ, Ամասիա, Սարալանջ, Սեծ և Փոքր Մանթաշ, Գեղանիստ և այլ գյուղերում, 2003:

⁸ «ՀԱՎԾ Շիրակի մարզային գործակալության տվյալներ, Գյումրի, 2002:»

⁹ Ա. Գ ա ս ս պ ա ր յ ա ն, Մեղվապահությունը Հայաստանում, Եր., 1989, էջ 151:

կան մասը պատասխանել է, որ մեղվապահությունը իր համար եկամտի լրացուցիչ աղբյուր է: Ի դեպ, Արքիլի տարածաշրջանի մեր այցելած զյուղական բնակավայրերում մեղվապահությունը, տնտեսության օժանդակ ճյուղերի մեջ գրաղեցնում է առաջնակարգ տեղը.¹⁰

Չեղքի տակ չունենալով պաշտոնական վիճակագրական տվյալներ, չենք կարող որոշակիորեն բնութագրել Արքիլի և Անիի տարածաշրջաններում մեղվապահության կազմակերպման դրվագը ու իրավիճակը: Նոյեմբեր չի կարելի ասել, սակայն, Աշոցքի, Անասիայի և Ախուրյանի տարածաշրջանների վերաբերյալ: Վիճակագրական բավականին հարուստ տվյալների առկայությունը բույլ է տալիս հնարավորին չափ մանրագնին ուրվագծել մեղվապահության տեղաբաշխումն այս տարածքներում՝ ըստ զյուղական բնակավայրերի: Ըստ այդ տվյալների՝ մեղվապահությամբ չեն գրաղվում Անասիայի տարածաշրջանի 19 զյուղական համայնքներից միայն երեքում, Աշոցքի զյուղական համայնքներից 15-ում, Ախուրյանի տարածաշրջանի համայնքներից 12-ում (տե՛ս աղ. 3): Անասիայի տարածաշրջանում մեղվափեթակների քվով առաջինը Սեղրաշատ զյուղն է՝ 105 մեղվափեթակ, վերջինը՝ Զարիշատը՝ 10 մեղվափեթակ:

Աղ. 3. Մեղվարնտանիքների տեղաբաշխումն ըստ զյուղական համայնքների Անասիայի, Աշոցքի և Ախուրյանի տարածաշրջաններում 2002 թ.¹¹

Մեղվարնտանիքների թիվը	Անասիա	Աշոցք	Ախուրյան
	մեղվապահությամբ գրաղվող զյուղական բնակավայրերի թիվը		
10-20	4	1	1
21-50	9	7	7
51-100	1	2	3
101-150	2	-	5
151-200	-	-	-
200-ից ավելի	-	-	5
Ընդամենը	16	10	21

Ըստ այս երեք տարածաշրջաններում մեղվապահության կազմակերպման վերաբերյալ մեր կողմից կազմված քարտեզի՝ Անասիայի տարածաշրջանում մեղվարնտանիքների 45,4 տոկոսը տեղաբաշխված է երեք զյուղական բնակավայրերում՝ Սեղրաշատում, Արեգանադենում և Անասիայում, իսկ ընդհանուր առնամբ տարածաշրջանում 100 զյուղացիական տնտեսությանը միջին հաշվով ընկնում է 38 մեղվարնտանիք, ինչը մարզի կտրվածքով ամենաբարձր ցուցանիշն է: Եթե նկատի ունենանք, որ մեկ մեղվարնտանիքից տարեկան ստացվում է մոտավոր հաշվով 18-20 կգ մեղր, ապա 2002թ. Անասիայի տարածաշրջանում արտադրվել է մոտավորապես 11,2-12,4 տ մեղր (մարզում արտադրված մեղրի 8,1%), որը հայատանյան շուկայում կարժենար մոտ 33-34 մլն դրամ: Ընդ որում, արտադրված մեղրի չնշին մասն է, որ սպառում են արտադրողները: Հիմնական մասը վաճառվում է:

2002 թվականին մեղվապահությամբ գրաղվում էին Աշոցքի 25 զյուղական համայնքներից տասում: Տարածաշրջանում մեղվարնտանիքների թիվը 468 էր՝ մարզում ամենափոքը: Առկա մեղվարնտանիքների թվի 51,1% տեղաբաշխված է եղել երեք զյուղական համայնքներում՝ Սարապատում, Ղազանչիում և Սեծ Սեպասարում:¹² Սեպասի հաշվարկներու նշված տարում այստեղ արտադրվել է սպառման շուկայում 25-27 մլն դրամ արժեցող 8,4-9,3 տ մեղր:


Ախուրյանի տարածաշրջանում 33 զյուղական համայնքներից մեղվապահությամբ գրաղվում են 21-ում: 2002 թվականին տարածաշրջանում մեղվարնտանիքների ընդհանուր թիվը եղել է 2346: Այդ թվի 56,7%-ը տեղաբաշխված է հինգ զյուղական բնակավայրերում՝ Կապս, Հայկավան, Երազզավորս, Հացիկ և Հովունի: 2002 թվականին Ախուրյանի տարածաշրջանում, մոտավոր հաշվարկով արտադրվել է 42,2-46,9 տ կամ մոտ 120-126 մլն դրամի մեղր:

¹⁰ Ա. Բ ո յ ա ջ ա ն, Դ Ա Ն, Տեսք 2:

¹¹ Շիրակի մարզականի զյուղաբաշխության տվյալներ:

¹² Նոյեմբեր:

**ԱՇՈՅՔԻ, ԱՍԱՄԻԿԱՅԻ ԵՎ ԱԽՈՒՐՅԱՎԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՎԱՆԵՐՈՒՄ
ՄԵՂՎԱՊԱՍՏԱՆԻՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ**



Ամփոփելով կարելի է փաստել.

1. Մեղվապահությունը Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում տարածված և տնտեսության օժանդակ ճյուղերի մեջ համեմատաբար առաջնային տեղ գրադարձնող ճյուղ է: Պաշտոնական վիճակագրական տվյալները իմմնականում չեն համապատասխանում իրականությանը. մարզում մեղվապահությանը գրադարձների և մեղվարնոտամիքների իրական թիվն անհամենաս ավելի մեծ է:

2. 2002 թվականին Շիրակի մարզում արտադրված մեղրը մոտավոր հաշվով կազմել է 149, 3 տ, ինչը սպառման շուկայում կարծենար մոտավորապես 440- 447 մլն դրամ (մարզի գյուղատնտեսական համախառն արդյունքի 1,2 %-ը):

3. Մոտավոր հաշվարկներով մեղվապահությանը գրադարձն են Շիրակի մարզի գյուղական աշխատունակ բնակչության 5-7 %-ը՝ իմմնականում 40-60 տարեկան:

ПЧЕЛОВОДСТВО В СОВРЕМЕННОМ ХОЗЯЙСТВЕ ШИРАКА

Резюме

A. Бояджян

В историческом Шираке пчеловодство было одним из традиционных отраслей подсобного хозяйства. В последнем десятилетии в Ширакском областном хозяйстве наблюдается увеличение роли пчеловодства. По официальным статистическим данным в 2002 г. в Ширакской области количество улей составляло 7857 штук. В этом году из 77 сельских общин бывших районов Ашотка (Гукасян), Ахуряна и Амасии только в 47-и развивается пчеловодство. В прошлом году в Шираке произведено меда на сумму от 440-до 447 млн. драмов, что составляет 1,2 % ВВП сельского хозяйства области.